

ՓՈԽՐԱԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ (ԴԻ-ՎԻ-ՎԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԱԼ) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՆԱԿՑՈՒՂԻ ԵՎ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻԶԵՎ

Քաղաք Գավառ,

9-ը նոյեմբերի, 2018թ.

Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության Միջազգային համագործակցության ինստիտուտի (ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալ) մասնաճյուղը Հայաստանում (այսուհետ՝ ԴԻ-ՎԻ-ՎԻ Հայաստան)՝ ի դեմս տնօրեն Ե. Հակոբյանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի մարզպետարանը՝ ի դեմս մարզպետ Գնել Սանոսյանի, կնքեցին սույն Հուշագիրը ԵՄ ֆինանսական օժանդակությամբ 2018թ.-ի փետրվարի 1-ից մեկնարկած «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» եռամյա ծրագրի շրջանակներում համագործակցության մասին:

Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերի ներառական և կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ խթանելով համայնքային զբոսաշրջության զարգացմանը, մշակույթային և բնապահպանական իրազեկվածությանն ուղղված նախաձեռնություններին՝ քաղաքացիական հասարակության ներգրավմամբ:

Գեղարքունիքի մարզում Ծրագրով նախատեսված հիմնական աշխատանքները կիրականացվեն հանրային քննարկման ընթացքում վերհանված և մարզային մակարդակի բազմաշահառու խմբի հետ առանձին քննարկման արդյունքում ընտրված ՄեԳաՄա կլաստերում, որն իր մեջ ներառում է Սևան-Լճաշեն, Գավառ-Նորատուս, Մարտունի-Մադինա բնակավայրերը:

Ծրագրի իրագործման արդյունավետությունը ապահովելու նպատակով կողմերը կնքում են սույն հուշագիրը և հանձն են առնում հետևյալ պարտավորությունները՝

ԴԻ-ՎԻ-ՎԻ Ինթերնեյշնալ՝

Հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածաշրջանային զարգացման ռազմավարության (2017-2025) առաջնահերթությունները՝

1. թիրախավորել զարգացման չբացահայտված հնարավորություն ունեցող, ինչպես նաև խոցելի համայնքները՝ մշակույթի և զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծրագրային գործունեության միջոցով:

Ծրագրային խնդիրներից ելնելով՝

2. տրամադրել դրամաշնորհային և մեկնարկային ֆինանսական միջոցներ՝ համայնքային և բիզնես նախագծերի իրականացման համար,
3. բարելավել համայնքահենք զբոսաշրջության զարգացման նախագծերի մշակման՝ համայնքային ակտիվ խմբերի և ՔՀԿ-ների (մարզային հասարակական

կազմակերպությունների, հիմնադրամների և այլ ակտիվ քաղաքացիական խմբերի) կարողությունները:

4. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի մարզպետարան՝

1. Աջակցել ընտրված կլաստերում Ծրագրային աշխատանքների արդյունավետ իրականացմանը՝ ապահովելով մարզային և տեղական իշխանությունների մասնակցությունը խորհրդակցական հանդիպումներին և բազմաշահառու խմբի աշխատանքներին:
2. Կազմակերպչական աջակցություն ցուցաբերել մարզային միջոցառումների, այդ թվում փառատոնների իրականացման ժամանակ:
3. Աջակցել ծրագրի իրականացման և մշտադիտարկման գործընթացներին՝ այդ թվում նաև խրախուսելով տեղական իշխանությունների մասնակցությունը:
4. Օգնել ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման և ծրագրային արդյունքների հրապարակման գործում:

Դի-Վի-Վի Հայաստանը և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը հաստատում են, որ սույն Հուշագրի ստորագրումը բխում է իրենց առաքելությունից ու շահերից: Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Դի-Վի-Վի Հայաստան

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

Հասցե՝ ՀՀ ք. Երևան, 0025, Չարենցի 1

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Գեղարքունիքի մարզպետարան

Ներկայացուցչության տնօրեն՝

Մարզպետ՝

Եսթեր Հակոբյան

Գնել Սանոսյան





